



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ, ք. Երևան, Գ.Նժդեհի փող. 23, հեռ. 447121 /222/

ԴԴ-9-Ե- 61200/17
24.11.2017թ.

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝
Շուշան Դոյրոյանին
ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Ուղարկվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի
24.11.2017 թվականի թիվ ՎԴ/2340/05/16 վճիռը՝ Ձեզ ի գիտություն:

Առդիր՝ վճիռը՝ «9» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ

Փ. ԹՈՎՄԱՍՅԱՆ



Վ Ճ Ի Ռ

Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

24.11.2017թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը հետևյալ կազմով՝

**Նախագահող դատավոր՝
Քարտուղարությամբ՝**

**Ս. Հովակիմյան
Ա. Գալստյանի**

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով վարչական գործն ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 02568394) ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 վարչական ակտն ամբողջությամբ վերացնելու, Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունն ոչ իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկությունները ստանալու ճանապարհին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կրած վնասները՝ 270270 ՀՀ դրամի չափով հատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 վարչական ակտն ամբողջությամբ վերացնելու, Պատասխանողի անգործությունն ոչ իրավաչափ ճանաչելուն և 270270 ՀՀ դրամի չափով կրած վնասները հատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր Ս. Հովակիմյան) 11.05.2016 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, 08.06.2016 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 վարչական ակտն ամբողջությամբ վերացնելու, Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունն ոչ



իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկությունները ստանալու ճանապարհին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կրած վնասները՝ 270270 ՀՀ դրամի չափով հատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Միաժամանակ հայցվորը դատարանին միջնորդել է պետական տուրքի վճարումը հետաձգել:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 14.06.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ՝ այն ընդունված համարելով սկզբնական ներկայացման օրը՝ 04.05.2016 թվականին, և հրավիրվել է նախնական դատական նիստ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 29.05.2017 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/2340/05/16 վարչական գործի դատաքննությունը նշանակվել է 2017 թվականի սեպտեմբերի 07-ին:

Դատարանը՝ 09.11.2017 թվականին ավարտելով դատաքննությունը, դատական ակտի հրապարակման օր է հայտարարել 24.11.2017 թվականին:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Լիանա Դոյդոյանը, դատարան ներկայացրած հայցադիմումով, հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանին են դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 11-րդ հոդվածով ձևակերպված դատական պաշտպանության իրենց իրավունքը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ԻԱԿ, Վստահորդ) 2015թ.-ի մայիսի 22-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը (այսուհետ նաև՝ ՃՈ, Պատասխանող)՝ խնդրելով տեղեկություններ ճանապարհային տեսախցիկների և լուսանկարահանող-արագաչափ սարքերի վերաբերյալ: ՃՈ-ն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում հարցմանը չի պատասխանել: Իր Վստահորդի հայցի հիման վրա ՀՀ վարչական դատարանը ոչ իրավաչափ է ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 22.05.2015թ.-ի հարցմանը օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելուն ուղղված ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունը: ՃՈ-ն դատարանի վճիռը չի բողոքարկել, ՀՀ վարչական դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ: ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունից խնդրել են հատուցել ՃՈ ոչ իրավաչափ անգործության հետևանքով իր Վստահորդի կրած նյութական վնասը: ՃՈ-ն մերժել է բավարարել իրենց դիմումով ներկայացված պահանջը: Սույն հայցով վիճարկում են ՀՀ ՃՈ-ի մերժման իրավաչափությունը և խնդրում պարտավորեցնել ՃՈ-ին բավարարել իր Վստահորդի կրած վնասների հատուցման պահանջը:

Հայտնում են նաև, որ 2015 թվականի մայիսի 22-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը փոստային ծառայությամբ ուղարկված տեղեկություն ստանալու թիվ 249-4 գրավոր հարցմամբ (այսուհետ՝ հարցում) դիմել է ՃՈ-ին: Հարցմամբ ՃՈ-ից խնդրվել է տրամադրել հետևյալ տեղեկությունները.

- Ենթարկվում են արդյոք ճանապարհային տեսախցիկները և լուսանկարահանող-արագաչափ սարքերը փորձաքննության (ստուգվում է արդյոք դրանց սարքինությունը),

- Եթե այո, ապա ի՞նչ պարբերականությամբ,

- Խնդրում են տրամադրել Երևան քաղաքում տեղադրված ճանապարհային ցանկը՝ նշելով տեսախցիկների և լուսանկարահանող-արագաչափ սարքերի



յուրաքանչյուրի տեղադրման վայրը և վերջին փորձաքննության ժամանակը (ե՞րբ է վերջին անգամ ստուգվել տվյալ տեսախցիկը կամ սարքը):

Հարցումը ճՈ ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2015թ.-ի մայիսի 22-ին: ԻԱԿ-ը ճՈ հարցման պատասխանն չի ստացել: 2015թ.-ի հունիսի 26-ին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով բողոքարկել են ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայության այն գործողությունները կամ անգործությունը, որով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել ԻԱԿ-ի կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ:

2015թ.-ի դեկտեմբերի 22-ին ՀՀ վարչական դատարանն իր թիվ ԿԴ/2861/05/15 վճռով ամբողջությամբ բավարարել է իրենց ներկայացրած հայցադիմումը՝ ոչ իրավաչափ է ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 22.05.2015թ.-ի հարցմանն օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելուն ուղղված ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունը: ճՈ-ն դատարանի վճիռը չի բողոքարկել, և 2016թ.-ի հունվարի 25-ին ՀՀ վարչական դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ: ՀՀ վարչական դատարանին ներկայացված հայցը կազմելու, դատական ներկայացուցչության, բարենպաստ դատական ակտի դեպքում վարչական ներկայացուցչության ծառայությունները իրականացվել են 01.06.2015թ.-ին իր և իր Վստահորդի միջև կնքված «Ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և նույն ամսաթվին կնքված և Պայմանագրի մասն կազմող հավելվածի հիման վրա: Պայմանագրով և հավելվածով իր Վստահորդը պարտավորվել է բարենպաստ դատական ակտի դեպքում իրեն մատուցված ծառայության դիմաց իրեն վճարել 200.000 ՀՀ դրամ, ինչպես նաև այդ գումարի համար հաշվարկվող հարկերը՝ 70.270 ՀՀ դրամի չափով: 2016թ.-ի փետրվարի 3-ին դիմել են ՀՀ ճՈ-ին՝ խնդրելով փոխհատուցել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկություններն ստանալու ճանապարհին իր Վստահորդի կրած վնասները՝ ներկայացուցչի վարձատրություն կազմող 200.000 ՀՀ դրամի չափով և նշված գումարի վրա հաշվարկվող հարկերը՝ 70.270 ՀՀ դրամի չափով: 23.02.2016թ. թվագրված թիվ 17-9-2939 գրությամբ ՀՀ ճՈ-ն մերժել է իրենց դիմումը:


ՃՈ մերժումն ունեցել է հետևյալ բովանդակությունը. «Վնասի հատուցման պահանջի մասին Ձեր դիմումի կապակցությամբ հայտնում են, որ այն մերժվում է, քանի որ ճանապարհային ոստիկանության կողմից իրականացված վարչարարության հետևանքով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին որևէ վնաս չի պատճառվել: Ինչ վերաբերում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և Ձեր միջև 01.06.2015թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ պայմանագրին, համաձայն որի Դուք վարձատրության դիմաց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի շահերն եք ներկայացրել ՀՀ վարչական դատարանում, ապա մեր կարծիքով այն համաչափ չէ մատուցված ծառայություններին և ենթակա չէ հատուցման:

Միաժամանակ հայտնում են, որ նշված գումարի փոխհատուցման պահանջով կարող եք դիմել ՀՀ վարչական դատարան»:

ՃՈ մերժումը իրենց ծանուցման հասցեի փոստային բաժանմունք առաքվել է 2016թ.-ի մարտի 1-ին:

Գտնում են, որ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության՝ 23.02.2016թ.-ի թիվ 17-9-2939 վարչական ակտը (պատասխան գրությունը) անվավեր է, իսկ մերժումը ոչ իրավաչափ հետևյալ պատճառաբանություններով:


«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով վնասի հատուցման մասին ՀՀ ճՈ ներկայացված գրությունը դիմում է: Իսկ ճՈ-ի պատասխան գրությունը նույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով վարչական ակտ է, հանդիսանում է վարչարարության արդյունք: Նման իրավական դիրքորոշում հայտնել է ՀՀ վարչական դատարանը թիվ 1564/05/08 գործով



17.07.2008թ.-ի վճռում, ըստ որի. «Վարչական դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի տեղակալի 11.12.2007թ. թվի 02/18-Ա-3479 գրությունը հանդիսանում է վարչարարության արդյունք, հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով այն ունի ուղղակի նշանակություն և գրվել է հենց այդ նպատակով, ուղղված է հասցեատիրոջ՝ Վ. Այվազյանի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, ունի արտաքին ներգործություն: Նման պայմաններում վարչական դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ հայցվորին տրամադրվել է ընդամենը գրություն, սակայն իր բովանդակային առումով այն համարվում է վարչական ակտ և դրա կայացումը բխել է վարչական մարմնի վարչարարության իրավագործություններից»: Նմանապես, ԾՈ-ի պատասխան գրությունը վարչական ակտ է, կոնկրետ գործի կարգավորման բնագավառում այն ունի ուղղակի նշանակություն և գրվել է հենց այդ նպատակով, ուղղված է իր Վստահորդի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն (տվյալ դեպքում՝ մերժել է փոխհատուցման իրավունքի իրականացումը), ունի արտաքին ներգործություն և դրա կայացումը բխել է ԾՈ-ի վարչարարության իրավագործություններից: Հետևաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով ԾՈ-ն ընդունել է միջամտող վարչական ակտ:

Հղում կատարելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ, 20-րդ, 30-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 57-րդ, 63-րդ հոդվածների պահանջներին, հայտնում են, որ ՀՀ ԾՈ-ին դիմում ներկայացրել են 2016թ.-ի փետրվարի 3-ին, ԾՈ-ն դիմումը ստացել է, այն չի վերադարձվել և չի վերահասցեագրվել, հետևաբար իրենց դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ: ՀՀ ճանապարհային ոստիկանությունը իր Վստահորդի դիմումի հիման վրա վարչական վարույթ հարուցելու մասին պարտավոր էր 3-օրյա ժամկետում ծանուցել իր Վստահորդին, սակայն դա չի արել, ինչը ոչ իրավաչափ է: ԾՈ-ն պարտավոր էր անցկացնել վարչական լսումներ, դա չի արել, ինչը ոչ իրավաչափ է: ԾՈ-ի ընդունած վարչական ակտը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, իսկ ԾՈ-ն չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, չի լսել իր Վստահորդին, պատասխան գրությամբ չի անդրադարձել իր Վստահորդի պահանջը հիմնավորող փաստարկներին, ավելին, իր Վստահորդի պահանջը մերժելիս հղում է արել ոչ թե փաստական հանգամանքների, այլ սեփական կարծիքին՝ առանց այն հիմնավորելու, մեջբերում «... ինչ վերաբերում է ... ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ պայմանագրին..., ապա իրենց կարծիքով այն համաչափ չէ մատուցված ծառայություններին և ենթակա չէ հատուցման»: ԾՈ-ի նման վարչական ակտն իրավաչափ չէ, օրենքի պահանջներից բխող վարչական ակտ չէ: Այսպիսով, գտնում են, որ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 23.02.2016թ.-ի թիվ 17-9-2939 վարչական ակտն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 38-րդ, 37-րդ և 57-րդ հոդվածների 1-ին մասերի խախտումով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 23.02.2016թ.-ի թիվ 17-9-2939 վարչական ակտն անվավեր վարչական ակտ է:


Իր Վստահորդին հասցված վնասի մասով հղում կատարելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ, 96-րդ, 97-րդ, 99-րդ, 100-րդ, 101-րդ հոդվածների պահանջներին, հայտնում են, որ ԾՈ-ն իր Վստահորդի հարցմանը չպատասխանելով դրսևորել է անգործություն, իսկ ՀՀ վարչական դատարանն այդ անգործությունը ճանաչել է ոչ իրավաչափ, հետևաբար, առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95 և 96-րդ հոդվածներով սահմանված պայմանը՝ վնասի հատուցում իրականացնելու համար: ԾՈ-ի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկությունները ստանալու համար իր Վստահորդը ստիպված է եղել դիմել դատարան, օգտվել ներկայացուցչի ծառայություններից և պարտավորվել է վճարել դրա դիմաց: Ինչպես արդեն նշվեց, ՀՀ



վարչական դատարանի վճռով հաստատվել է իր Վստահորդի իրավունքների խախտման փաստը, այն է՝ ոչ իրավաչափ է ճանաչվել վարչական մարմնի անգործությունը: Իրավունքների խախտում առկա չլինելու դեպքում (եթե նրա իրավունքը չխախտվեր, եթե նրա նկատմամբ ոչ իրավաչափ վարչական ակտ չկիրառվեր, եթե ոչ իրավաչափ անգործություն չդրսևորվեր) իր Վստահորդը ստիպված չէր լինի կատարել ծախսեր կամ ստանձներ ծախսեր կատարելու պարտավորություն: Վերոգրյալից ակնհայտ է պատճառահետևանքային կապը ճՈ-ի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու գործընթացի և իր Վստահորդի կրած վնասների միջև: Տվյալ դեպքում իր Վստահորդը վնասներ կրել է ծախսերի տեսքով, հետևաբար ակնկալում է իր կրած վնասների հատուցումն իրականացնել դրամական միջոցներով հատուցելու եղանակով: Ակնհայտ է, որ իր Վստահորդի կրած վնասը (ծախսած միջոցները) չէր լինի, եթե չլիներ ճՈ ոչ իրավաչափ վարչարարությունը (ոչ իրավաչափ անգործությունը):

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը նշում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Ինչպես նշվեց՝ Եվրոպական դատարանի նախադեպերը հանդիսանում են Կոնվենցիայի մեկնաբանության հիմնական աղբյուրը, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի 2002թ.-ի փետրվարի 22-ի ՍԴՈ-350 որոշման դիրքորոշման համաձայն՝ նաև Հայաստանի սահմանադրական իրավունքի աղբյուր: Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը նշում է, որ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: ...»: Այս դրույթն անառարկելիորեն երկու պայման է նախատեսում, առաջինը՝ պետք է առկա լինի գույք կամ ունեցվածք, այսինքն՝ սեփականություն: Երկրորդը՝ պետք է առկա լինի սեփականության կամ ունեցվածքի խաղաղ տիրապետմանն անօրինական միջամտություն կամ դրանից անօրինաբար զրկում:

Առաջին պայմանն առկա է հետևյալ պատճառաբանությամբ. դրամական միջոցները՝ համաձայն ՀՀ ներպետական իրավունքի, գույք են և հանդիսանում են քաղաքացիական իրավունքի օբյեկտ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝ 1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները...»: Եթե նույնիսկ վերը նշվածը սահմանված չլիներ ՀՀ ներպետական իրավունքով, ապա «սեփականություն» տերմինը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում գործածվելիս ձեռք է բերել ինքնավար նշանակություն: Սա նշանակում է, որ ըստ ներպետական օրենքի, այն գուրկ է պաշտոնական դասակարգումներից (Բեյեյերն ընդդեմ Իտալիայի (գանգատ № 33202/96) 05.01.2000թ, պարբ. 100, Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի (գանգատ № 25701/94), 23.11.2000թ., պարբ. 60) և դատարանն իր նախադեպային վճիռներում բազմիցս հաստատել է դրամական միջոցների գույք և սեփականության տեսակ լինելու հանգամանքը: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն գույք են համարվում նյութական այլ արժեքները ևս, այդ թվում նաև այն պահանջները, որոնց կապակցությամբ դիմողը կարող է վիճարկել, որ ինքն առնվազն օրինական հավակնություններ ունի, որ դրանք կիրառործվեն («Պրեստոս Կոմպանիա Նավիերա ԷսԱն» և այլոք ընդդեմ Բելգիայի, գանգատ №17849/91), Շարք Ա, թիվ 332, 20.11.95, (1996) 21 EHRR 301): Հայցապահանջը կարող է դիտվել որպես գույք, երբ բավարար չափով հիմնավորված է, որ այդ պահանջի հիմքում առկա է հայցի ապահովման միջոց («suffisamment ntable pour Utre exigible») («Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի», (գանգատ № 59498/00) գործով 07.05.2002թ. վճիռը, պարբ. 40): ՃՈ ներկայացված դիմումով իր Վստահորդի համար ներկայացնում է փոխհատուցման պահանջ ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի, իր ներկայացուցչին պայմանագրի հիման վրա վճարելու ենթակա դրամական միջոցները փոխհատուցելու փաստական հիմքերի հիման վրա և համապատասխան պահանջ ներկայացնելու իրավակարգավորումը սահմանող իրավական հիմքերի հիման վրա: Վերոգրյալի հիման




վրա իր Վստահորդը պնդում է, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի ու Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ «գույք» առկա է:

Երկրորդ պայմանն առկա է հետևյալ պատճառաբանությամբ. 25.01.2016թ.-ին օրինական ուժի մեջ է մտել իր Վստահորդի համար բարենպաստ դատական ակտ՝ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2861/05/15 վարչական գործով կայացրած վճիռը: 01.06.2015թ.-ի «Ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ» պայմանագրի և պայմանագրի հավելվածի հիման վրա իր Վստահորդը իր իրավունքները պաշտպանելու դիմաց իր ներկայացուցչին պարտավորվել է վճարել վարձատրություն այնպես, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված եկամտային հարկի հաշվարկից և վճարումից (եկամտային հարկի նվազեցումից) հետո վճարվելիք գուտ գումարը կկազմի 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Այն է, գործող հարկային օրենսդրության հաշվարկով՝ 270.270 ՀՀ դրամ գումար՝ ներառյալ եկամտային հարկը: Երկրորդ պայմանի առկայությունը հիմնավորվում է նաև սույն հայցում ներկայացված հիմնավորումներում, որոնք ցույց են տալիս, որ իր Վստահորդի՝ իր սեփականությունը հանդիսացող դրամական միջոցներից զրկվելու հիմքում ընկած է վարչական մարմնի ոչ իրավաչափ անգործողությունը, որի իրավաչափության հարցի պատասխանը տվել է ՀՀ վարչական դատարանը: Եվ եթե չլիներ ոչ իրավաչափ միջամտությունն իր Վստահորդի իրավունքին, ապա չէր լինի նաև իր Վստահորդի կողմից իր սեփականությունը հանդիսացող դրամական միջոցներից զրկումը, այլ կերպ ասած՝ ստիպված չէր լինի իր սեփականությունը պարտադրված վատնել վարչական մարմնի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքները վերացնելու համար:

Իրավաբանական ծախսերի հատուցման իրավունքն ամրագրված է նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով, եթե դրանք իրական են, անհրաժեշտ և ողջամիտ: Ընդ որում, իրականության պայմանը Եվրոպական դատարանի նախադեպերի համաձայն նշանակում է, որ հատուցման ներկայացված ծախսերը կամ կատարված են, կամ պետք է կատարվեն, անհրաժեշտ ծախսերը ներառում են ոչ միայն պարտադիր ծախսերը, այլ նաև ցանկացած այլ ծախսեր, որոնք օգտակար են ճանաչված տվյալ գործի լուծման համար, իսկ ողջամտությունը ենթադրում է ծախսերի համաչափությունը վիճարկվող իրավունքի արժեքին: Հատուցման են ենթակա նաև գործի հաջողությունից նախատեսված պարգևավճարները: Պնդում են, որ գործի հաջողության դեպքում փաստաբանի վարձավճարը ապագայում փոխհատուցմամբ ստանալու իրավունքը ճանաչվում է նաև Եվրոպական դատարանի կողմից և որ նման իրավահարաբերությունը կարգավորող պայմանագիրը (contingency contract) իրավական ներկայացուցչի և շահառուի միջև, եթե նման իրավահարաբերությունը ճանաչվում է ազգային իրավունքով, ճանաչվում է նաև Եվրոպական դատարանի կողմից, քանի որ նման պայմանագիրը հիմք է, որ «պահանջվող գումարը իրականում վճարվելու է դիմողի կողմից» (Դադջենն ընդդեմ Միացյալ Թագավորության, 24/02/1983, Կամասինսկին ընդդեմ Ավտորայի, 19/12/1989, Շարք Ա, թիվ 168, էջ 47, պարբ. 115: Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի, թիվ 31107/96, 19/10/2000, պարբ. 55):

Իրենց համար ընդունելի դիրքորոշում է, որ եթե իրավաբանական ծախսերը հատուցման ենթակա չլինեն, ապա դա կլինի անարդար և կհակասի իրավական պետության սկզբունքներին: Այն կսահմանափակի իրավական օգնություն ստանալու իրավունքը, կհանգեցնի արդարադատության անարդյունավետության և կանայականության, կխոչընդոտի իրավաբանական ծառայությունների ազատ շրջանառությանը՝ գործնականում վերածելով փաստաբանությունը դատարանի և կողմերի միջև բրոքերության, կհանգեցնի իրավախախտումների անպատժելիությանը (այդ թվում և հատկապես հարկային և այլ պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների դեպքում), կարող է բարենպաստ միջավայր ստեղծել կոռուպցիայի և չարաշահումների համար:

Վնասի հատուցման ծավալը և «վնաս» հասկացությունն առհասարակ կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Ուստի, ճՈ ներկայացված դիմումով վնասի հատուցման ծավալը հիմնավորելու համար վկայակոչում են ՀՀ




քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը, ըստ որի՝ վնասը պետք է հատուցվի լրիվ ծավալով: Այս դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ վերաքննիչ դատարանը՝ թիվ ԵԿԴ/1320/02/10 գործով որոշում կայացնելիս: Օգտվելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածով ընձեռված հնարավորությունից՝ վկայակոչում են թիվ ԵԿԴ/1320/02/10 գործով ՀՀ վերաքննիչ դատարանի դիրքորոշումը վնասի հատուցման ծավալի վերաբերյալ: Սակայն, թեև վնասի հատուցումը ենթադրում է վնասի լրիվ հատուցում, սակայն հարկ են համարում հիմնավորել ՃՈ-ին իր Վստահորդի և իր բարեխղճությունը և պահանջվող փոխհատուցման չափի ողջամտությունը: Նախ, իր Վստահորդն իր ներկայացուցչին պարտավորվել է վճարել 200.000 ՀՀ դրամ գումար: Գործարար միջավայրում վարչական մեկ ներկայացուցչություն իրականացնելու համար վարձատրությունը տատանվում է 200.000-ից 400.000 ՀՀ դրամի սահմաններում (հազվադեպ բացառություններով): Նման պայմանագրեր իրենց հայտնի են, սակայն հասու չեն: Ուստի, իր Վստահորդի համար ներկայացուցչություն իրականացնելու համար նախատեսվել է գործարար միջավայրում ընդունված և վարձատրության նվազագույն չափին համադրելի վարձատրություն: Բացի այդ, հայցի կազմման ծավալը (էջերի քանակը), վկայակոչված դիրքորոշումները, դատարանների մեկնաբանությունները և վկայակոչված օրենսդրությունը վկայում են, որ հայցի նախապատրաստման համար նույնպես ուսումնասիրվել է օրենսդրություն, կատարվել է դատական պրակտիկայի ուսումնասիրություն և հայցը կազմվել է բարեխղճորեն: Արդյունքում ներկայացուցչությունը ներառել է օրենսդրական կարգավորումների առնվազն հետևյալ խմբերի ուսումնասիրություն՝ վարչական և վարչական դատավարության, տեղեկատվության ազատության իրավունքի, ինչպես նաև նախադեպային իրավունքի ուսումնասիրություն:

Բացի այդ, ծառայության մատուցման համար արվող որևէ խելամիտ ծախս (ճանապարհածախս, փոստային ծախս, պատճենահանման ծախսեր և այլն) չի ներկայացվել առանձին, այն ներառվել է վարձատրության գումարի մեջ (պայմանագրի հավելվածի 1-ին ծանոթություն): Ուստի վարձատրություն համարվող գույք գումարն իրականում ավելի պակաս է, քան 200.000 ՀՀ դրամը:

Գտնում են, որ ծառայության վարձատրության չափի համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ իր Վստահորդը վարձատրություն վճարելու պարտականություն ստանձնում է բացառապես իր համար բարենպաստ վերջնական դատական ակտի կամ բարենպաստ լուծման դեպքում: Այսինքն, ոչ բարենպաստ դատական ակտի դեպքում ներկայացուցչության ծախսերի ռիսկը կրել է ներկայացուցիչը: Հետևաբար, մատուցված ծառայության պայմանները որակապես տարբերվում են ծառայության մատուցման այլ (առանց նախապայմանների, անկախ ներկայացուցչության ելքից՝ պարտադիր վարձատրվող) պայմաններից, հետևաբար ռիսկի գործոնը հաշվի առնելով կարող են վարձատրվել ավելի բարձր, քան այլ պայմաններով (առանց նախապայմանների, անկախ ներկայացուցչության ելքից՝ պարտադիր վարձատրվող) մատուցվող ծառայությունը:

Գտնում են, որ ծառայության վարձատրության չափի համար էական նշանակություն ունի նաև կողմերի կարգավիճակը՝ մի կողմից ՃՈ-ն, որն օժտված է վարչարարության իրավազորությամբ և սնվում է հարկատուների դրամական միջոցներից՝ համայնքային բյուջեից, ունի աշխատակազմ, իրավաբաններ, իրավաբանական վարչություն կամ բաժին և այլն, մյուս կողմից ԻԱԿ-ը, ով վարչական մարմնի վարչարարության իրավաչափությունը վիճարկելու համար օգտվել է բացառապես իր սեփական դրամական միջոցներից, իսկ նրա ներկայացուցիչը չի ունեցել հնարավորություն օգտվել վարչական մարմնի հնարավորությունների սահմաններում գտնվող ռեսուրսներից: Ուստի, ռեսուրսների անհամաչափությունն ակնհայտ է, և դրա ուժով ակնհայտ է նաև այն, որ ԻԱԿ-ի շահերը պաշտպանելու համար մի ներկայացուցիչն իրականացրել է լայնածավալ աշխատանք, հետևաբար վարձատրության չափը խելամիտ է:

ՀՀ օրենսդրությունը սահմանում է հասցված վնասի հատուցում լրիվ ծավալով, դա պնդում են, իսկ սույն մասում ներկայացված փաստարկները վկայում են իրենց



բարեխղճության մասին: Այսպես, ճանապարհային ոստիկանության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու ճանապարհին իր Վստահորդի կրած վնասը կազմում է 270.270 ՀՀ դրամ գումար, որից.

- Ներկայացուցչի վարձատրություն - 200.000 ՀՀ դրամ,
- հաշվարկվող հարկեր - 70.270 ՀՀ դրամ:

Ներկայացուցչի 200.000 ՀՀ դրամ վարձատրությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

- Իրավաբանական խորհրդատվություն,
- հայցի կազմում և ներկայացուցչություն դատարանում,
- ճանապարհային ոստիկանության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու ճանապարհին իր Վստահորդի կրած վնասների փոխհատուցման մասին 03.02.2016թ.-ի դիմումի (սույն դիմումի) կազմում և ներկայացուցչություն վարչական մարմնում,
- համապատասխան ներպետական օրենսդրության, ՄԻԵԴ և ներպետական դատարանների նախադեպերի ուսումնասիրություն, հայցերի, դիմումների կազմման ծախսեր, փոստային ծախս, պատճենահանման ծախսեր, ճանապարհածախս, անհրաժեշտ այլ ծախսեր:

Այսպիսով, ներկայացուցչությունն իր մեջ ներառել է ոչ միայն դատարանում ներկայացուցչությունը, այլ նաև հայցի կազմումը, խորհրդատվություն ամբողջ գործընթացի ընթացքում, ինչպես նաև բարենպաստ դատական ակտի դեպքում վնասի փոխհատուցման ուղղված վարչական վարույթի նախաձեռնում և վարչական ներկայացուցչություն: Այսինքն, պայմանագրով նախատեսվել է օրենսդրության երկու առանձին ոլորտներում ներկայացուցչություն՝ ՏԱ ոլորտ (դատական ներկայացուցչություն), վնասների հատուցման ոլորտ (վարչական ներկայացուցչություն): Բացի այդ, հայցադիմումի բովանդակությունը վկայում է, որ հայցադիմումի կազմումն իրենից ներկայացրել է վերլուծական աշխատանք՝ հայցը կազմված է եղել 11 էջից, ներառում է ինչպես ՏԱ օրենսդրության վերլուծություն, այնպես էլ հայցապահանջների ընդունելության վերաբերյալ դատական պրակտիկայի վերլուծություն (հայցի 5.1-5.7 կետեր): Այսպես, հայցի կազմման ծավալը (էջերի քանակը), վկայակոչված դիրքորոշումները, դատարանների մեկնաբանությունները և վկայակոչված օրենսդրությունը վկայում են, որ հայցի նախապատրաստման համար ուսումնասիրվել է օրենսդրություն, կատարվել է տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի ուսումնասիրություն և հայցը կազմվել է բարեխղճորեն: Ինչպես նշվեց՝ սույն դիմումի կազմումը նույնպես նախատեսված է պայմանագրով, ներառվում է վարձատրության գումարի մեջ՝ և չի վարձատրվում առանձին: Սույն դիմումի կազմումը նույնպես իրենից ներկայացնում է վերլուծական աշխատանք՝ դիմումը կազմված է 8 էջից, ներառում է ինչպես վնասի հատուցման ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքի և դատական պրակտիկայի վկայակոչումներ, ուստի սույն դիմումը ևս կազմվել է բարեխղճորեն:

Սույն հայցի հիմնավորումներով ներկայացված է պայմանագրով ԻԱԿ-ի կողմից իր ներկայացուցչին վճարվելիք գումարի ողջամտությունը: Վերոնշյալը հաշվի առնելով՝ գտնում են, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից առաջարկվող վնասի փոխհատուցման պայմանը ողջամիտ է, անհիմն են նաև ԳՈ պատճառաբանություններն այն մասին, թե պահանջվող փոխհատուցման չափը համաչափ չէ մատուցված ծառայություններին:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 65-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով՝ խնդրում է ամբողջությամբ վերացնել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 23.02.2016թ.-ի թիվ 17-9-2939 վարչական ակտը: Պարտավորեցնել ՀՀ ԳՈ-ին բավարարել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկությունները ստանալու ճանապարհին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կրած վնասները 270.270 ՀՀ դրամի



չափով հատուցելու պահանջը: Պատասխանողից բռնագանձել սույն հայցի արդյունքում դատական ծախսերը՝ ներկայացուցչին վճարվելիք գումարը և պետական տուրքը:

Ի լրումն հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Գևորգ Չայրապետյանը հայտնել է, որ հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը, հստակեցնում է, որ ներկայացված հայցի հիմքում դնում են պարտավորեցման հայցը և դրա կարգավորումները: Ըստ այդմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության անունից ներկայացված 02.05.2016թ.-ի հայցի պահանջն է ամբողջությամբ վերացնել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 23.02.2016թ.-ի թիվ 17-9-2939 վարչական ակտը և պարտավորեցնել ՀՀ ճՌ-ին փոխհատուցել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկությունները ստանալու ճանապարհին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կրած վնասները 270.270 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև պատասխանողից բռնագանձել հայցի արդյունքում դատական ծախսերը՝ ներկայացուցչին վճարվելիք գումարը և պետական տուրքը:

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանի վերաբերյալ հայտնում է, որ պատասխանում նշված փաստարկները համարում են առարկայազուրկ և անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

2015թ.-ի հունիսի 26-ին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով հայցվորը բողոքարկել էր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայության այն գործողությունները կամ անգործությունը, որով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել ԻՎԿ-ի կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ: Ի թիվս այլնի՝ հայցվորը հայցում նշել էր, որ հայց ներկայացնելու նպատակներից է վնասի հատուցում ստանալը: 2015թ.-ի դեկտեմբերի 22-ին ՀՀ վարչական դատարանն իր թիվ ՎԴ/2861/05/15 վճռով ամբողջությամբ բավարարել է ներկայացրած հայցադիմումը՝ ոչ իրավաչափ է ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 22.05.2015թ.-ի հարցմանը օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելուն ուղղված ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունը: Այսինքն, հայցվորի ներկայացուցչի՝ ներկայացուցչություն իրականացնելու հնարավորությունը, ներկայացուցչի վարձատրվելու հանգամանքը թիվ ՎԴ/2861/05/15 գործի առարկա էր և դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով կասկած չի հարուցվել դրա իրավաչափության վերաբերյալ:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի ճՌ կողմից վկայակոչված դրույթները կիրառվում են համապատասխան դատավարություններում այդ մասին նշման պարտադիր պայմանով: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի պահանջում վարչական գործերով ներկայացուցչության համար փաստաբանի որակավորման պարտադիր պայման, հետևաբար վարչական գործերով ներկայացուցչությունը և վճարովի և պարբերաբար կարող է իրականացվել ոչ փաստաբանի կողմից: Վերոնշյալ պնդումը հիմնված է դատական նախադեպերի վրա: Մասնավորապես, թիվ ՎԴ/0471/05/13 և ՎԴ/1895/05/14 գործերը (Արա Աստոյանն ընդդեմ ՀՀ ճՌ-ի) ամբողջությամբ համադրելի են սույն գործի հետ: Դրանցով ՀՀ վարչական դատարանը բավարարել է հայցվորի վնասի հատուցման պահանջը: Նաև վերոնշյալ պնդումը հաստատվում է ՍԴՌ-1192 որոշմամբ, որով ՀՀ Սահմանադրական դատարանը սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը՝ թույլատրելով վարչական գործերով վերաքննիչ բողոք ներկայացնել ոչ փաստաբաններին:



Հայցվորը՝ պատշաճ ծանուցված լինելով դատական նիստի ժամանակի և վայրի մասին, չի ներկայացել դատական նիստին և չի խնդրել գործը քննել իր բացակայությամբ:


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ որի՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար, դատարանը որոշել է գործը քննել դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված, չներկայացած Հայցվորի բացակայությամբ:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հայցադիմումի պատասխան չի ներկայացվել:

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Հայկ Վարդանյանը 11.07.2016 թվականին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնում է, որ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ «Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝ ներկայացուցչություն, ներառյալ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն)», նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝ մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի», ուստի նորմերի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ օրենսդիրը որպես փաստաբանական գործունեության տեսակ դատական ներկայացուցչության ձև նախատեսում է երկու պայման, որոնք միմյանց կապում է «կամ» շաղկապով՝ 1-ին այն որպես պարբերաբար իրականացվող գործունեություն և 2-րդ այն որպես վճարովի կարգով իրականացվող գործունեություն և բացի դա վճարովի իրականացվող գործունեության տեսանկյունից էլ սահմանում է, որ եթե այն իրականացվում է ի պաշտպանություն մերձավոր ազգականների շահերի պաշտպանության, չի կարող կատարվել վճարովի հիմունքներով, ուստի ակնհայտ է, որ հայցվորի ներկայացուցիչը չի ներկայացրել փաստաբանի արտոնագիր, ուստի նա չի հանդիսանում փաստաբան և թեև ՎԴՕ իմաստով իրավունք ունի դատարանում ներկայացնելու հայցվորի շահերը, քանի որ ներկայացրել է պատշաճ ձևակերպված ներկայացուցչի լիազորագիր, սակայն այն չի կարող կատարել իբրև վճարովի ծառայության մատուցում՝ պայմանագրի հիմքով, քանի որ այն կհամարվի դատական ներկայացուցչության տեսակ, որը փաստաբանության մասին օրենքի իմաստով հանդիսանում է փաստաբանական գործունեություն, իսկ եթե հայցվորը հանդիսանում է իր հարազատը, ապա միևնույն է ներկայացուցիչը չի կարող այդ ծառայությունը մատուցել վճարովի հիմունքներով:

Անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1263 որոշմամբ հայտնել է նմանատիպ դիրքորոշում, մասնավորապես՝ նշելով՝ «Վերը նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ ցանկացած գործունակ քաղաքացի, եթե առկա չէ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերից որևէ մեկը, կարող է իրականացնել դատական ներկայացուցչություն: Ինչ վերաբերում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերին, որոնք դատական ներկայացուցչության իրականացման բնագավառում հանդես են գալիս որպես բացառություններ, ամրագրված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում:



Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է դատական ներկայացուցչության կամ դրա կազմակերպման երկու դեպք.

- դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն, և

- դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը ոչ որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն:

Ընդ որում, դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը՝ որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն, կարող է իրականացնել միայն փաստաբանը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միայն փաստաբանի կողմից պարբերաբար կամ վճարովի հիմունքներով ծառայություն մատուցելու օրենսդրական պահանջը բխում է փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթից, «ծառայություն» եզրույթի բովանդակությունից, որոնց համար հատկանշական են պարբերականությունը և վճարովիությունը, ինչպես նաև նման ծառայություն մատուցողի հանդեպ համարժեք պատասխանատվության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունից:

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Հայկ Վարդանյանը դատարանից խնդրում է սույն առարկություններն ընդունել որպես իր դատական նիստին հայտնելիք դիրքորոշում և նիստն անցկացնել իր բացակայությամբ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որի՝ հայցվորը, պատասխանողը կամ երրորդ անձն իրավունք ունեն վարչական դատարանին միջնորդելու գործն իրենց բացակայությամբ և ներկայացված նյութերի հիման վրա քննելու մասին, դատարանը որոշել է գործը քննել Պատասխանողի բացակայությամբ:

4. Գործի փաստերը.

Սույն գործի լուծման համար եական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Գևորգ Հայրապետյանը՝ 03.02.2016 թվականին դիմել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն՝ թիվ 47/2861/05/15 վարչական գործով առաջացած վնասները փոխհատուցելու խնդրանքով, այն վնասները, որոնք «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կրել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության այն անգործությունն ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցադիմումով, որով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել ԻԱԿ-ի կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ, 270270 ՀՀ դրամի չափով:

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետի 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 գրությամբ հայտնվել է, որ՝ «Վնասի հատուցման պահանջի մասին դիմումը մերժվում է, քանի որ ճանապարհային ոստիկանության կողմից իրականացված վարչարարության հետևանքով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին որևէ վնաս չի պատճառվել: Ինչ վերաբերում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և Ձեր միջև 01.06.2015թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ պայմանագրին, համաձայն որի Դուք վարձատրության դիմաց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի շահերն եք ներկայացրել ՀՀ վարչական դատարանում, ապա մեր կարծիքով այն համաչափ չէ մատուցված ծառայություններին և ենթակա չէ հատուցման:

Միաժամանակ հայտնում են, որ նշված գումարի փոխհատուցման պահանջով կարող եք դիմել ՀՀ վարչական դատարան»:

3) Ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ 01.06.2015 թվականի պայմանագիրը:



4) Թիվ ՎԴ/2861/05/15 վարչական գործով կայացած դատական ակտը (հանված «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից):

5. Դատական ակտի պատճառաբանությունները և դատարանի եզրահանգումը.

Գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը գտնում է, որ հայցն ենթակա է բավարարման մասնակի հետևյալ պատճառաբանություններով.

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.


2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:»:

Տվյալ դեպքում Հայցվորը դիմել է դատարան՝ խնդրելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 վարչական ակտն անբողջությամբ վերացնել, Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունն ոչ իրավաչափ ճանաչելու և փնտրվող տեղեկությունները ստանալու ճանապարհին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կրած վնասները՝ 270270 ՀՀ դրամի չափով հատուցել:

Դատաքննությամբ հաստատվեց, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Գևորգ Հայրապետյանը՝ 03.02.2016 թվականին դիմել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն՝ վնասները փոխհատուցելու խնդրանքով, այն վնասները, որոնք «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կրել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության այն անգործությունն ոչ իրավաչափ ճանաչելու ճանապարհին, որով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել ԻՎԿ-ի կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ, 270270 ՀՀ դրամի չափով:

Ի պատասխան նշված դիմումի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետը 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 գրությամբ հայտնել է, որ՝ «Վնասի հատուցման պահանջի մասին դիմումը մերժվում է, քանի որ ճանապարհային ոստիկանության կողմից իրականացված վարչարարության հետևանքով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀՀ-ին որևէ վնաս չի պատճառվել: Ինչ վերաբերում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀՀ-ի և Ձեր միջև 01.06.2015թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ պայմանագրին, համաձայն որի Դուք վարձատրության դիմաց «Ինֆորմացիայի



ազատության կենտրոն» ՀԿ-ի շահերն եք ներկայացրել ՀՀ վարչական դատարանում, ապա մեր կարծիքով այն համաչափ չէ մատուցված ծառայություններին և ենթակա չէ հատուցման:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված գումարի փոխհատուցման պահանջով կարող եք դիմել ՀՀ վարչական դատարան»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործելու սահմանադրաիրավական պահանջն առանցքային նշանակություն ունի սահմանադրական օրինականության ապահովման խնդրում, առանց որի անհնարին է ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության բնականոն զարգացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ-նյութական վնասը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վարչական մարմինների



կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն բաժնի դրույթներին համապատասխան:

2. Ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է՝

ա) Հայաստանի Հանրապետությունը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում նշված վարչական մարմինների դեպքում:

բ) համապատասխան համայնքը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում նշված վարչական մարմինների դեպքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված դեպքում վնասի հատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, իսկ «բ» կետով նախատեսված դեպքում՝ համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածը սահմանում է՝ «Վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ «Վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրանական միջոցներով հատուցելու եղանակով:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 99-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրանական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

2. Վնասի հատուցում պահանջող անձը կրում է վնասի հետևանքների վերացման ծախսերն այն չափով, որ չափով դրանք առաջացել են իր մեղքով:

Եթե անձն ի վիճակի չէ կրելու այդ ծախսերը, ապա նա պարտավոր է վնասի հատուցման պահանջը սահմանափակել այն ծախսերի չափով, որոնք առաջացել են պատասխանատվություն կրողի մեղքով:»:


«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 100-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա:

2. Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան:

2. Վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ, որն առ ոչինչ է կամ անվավեր է ճանաչվել, ապա վարչական մարմինը, շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, պարտավոր է նրան հատուցել այն գույքային վնասը, որն այդ անձը կրել է ոչ իրավաչափ վարչական ակտի



գոյությանը վստահելու հետևանքով, բացառությամբ սույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Հատուցման չափը սահմանում է վարչական մարմինը: Վնասի հատուցման չափը պետք է համարժեք լինի այն օգուտի չափին, որը շահագրգիռ անձը կարող էր ստանալ վարչական ակտի կատարման դեպքում:»:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմիններն են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործությունն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման, ընդ որում՝ Տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է համապատասխան համայնքը, որպիսի վնասի հատուցումը կատարվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

Սիաժամանակ, վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով անվավեր (ոչ իրավաչափ) չի ճանաչվել, իսկ վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով: Պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը, իսկ վնասի հատուցում պահանջող անձը կրում է վնասի հետևանքների վերացման ծախսերն այն չափով, որ չափով դրանք առաջացել են իր մեղքով: Եթե անձն ի վիճակի չէ կրելու այդ ծախսերը, ապա նա պարտավոր է վնասի հատուցման պահանջը սահմանափակել այն ծախսերի չափով, որոնք առաջացել են պատասխանատվություն կրողի մեղքով:

Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա, իսկ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել: Եթե ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ, որն առ ոչինչ է կամ անվավեր է ճանաչվել, ապա վարչական մարմինը, շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, պարտավոր է նրան հատուցել այն գույքային վնասը, որն այդ անձը կրել է ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությանը վստահելու հետևանքով: Հատուցման չափը սահմանում է վարչական մարմինը: Վնասի հատուցման չափը պետք է համարժեք լինի այն օգուտի չափին, որը շահագրգիռ անձը կարող էր ստանալ վարչական ակտի կատարման դեպքում:

Դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետը 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 գրությամբ ի պատասխան «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Գևորգ Հայրապետյանի 03.02.2016 թվականի դիմումին հայտնել է, որ՝ «Վնասի հատուցման պահանջի մասին դիմումը մերժվում է, քանի որ ճանապարհային ոստիկանության կողմից իրականացված վարչարարության հետևանքով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին որևէ վնաս չի պատճառվել: Ինչ վերաբերում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և Ձեր միջև 01.06.2015թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ պայմանագրին, համաձայն որի Դուք վարձատրության դիմաց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի շահերն եք ներկայացրել ՀՀ վարչական դատարանում,



ապա մեր կարծիքով այն համաչափ չէ մատուցված ծառայություններին և ենթակա չէ հատուցման:

Միաժամանակ հայտնում են, որ նշված գումարի փոխհատուցման պահանջով կարող եք դիմել ՀՀ վարչական դատարան»:

Տվյալ դեպքում, համաձայն թիվ ՎԴ/2861/05/15 (որը մտել է օրինական ուժի մեջ) դատական ակտի՝ դատարանը վճռել է՝ բավարարել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը: Ոչ իրավաչափ ճանաչելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 22.05.2015 թվականի հարցմանը օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելուն ուղղված ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունը:

Վերոգրյալ իրավական նորմերի և սույն գործի փաստերի համադրման արդյունքում դատարանն եզրակացնում է, որ տվյալ դեպքում, համաձայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի, ոչ իրավաչափ է ճանաչվել Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունը, որպիսի պայմաններում վնաս կրած անձը Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը ներկայացրել է վնասի հատուցման պահանջ, սակայն նման պահանջն ամբողջությամբ վարչական մարմնի կողմից մերժվել է:


Մինչդեռ դատարանը գտնում է, որ երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի համաձայն վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ է ճանաչվում, Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը պարտավոր էր հատուցել գույքային վնասը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը վարչական մարմնի համար չի սահմանում նախապայման կամ հնարավորություն պատճառված վնասի հատուցման համար, այլ սահմանում է վարչարարության հետևանքով անձին պատճառված գույքային վնասը հատուցելու պարտավորություն:

Տվյալ դեպքում, սույն գործի փաստերով հաստատվում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության և Գևորգ Հայրապետյանի միջև 01.06.2015 թվականին կնքվել է «Ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ» պայմանագիր: Համաձայն պայմանագրի մասը կազմող աղյուսակի՝ կողմերի միջև սահմանվել է վարձատրության չափ՝ 200.000 ՀՀ դրամ, որպես մատուցվող ծառայությունների, մասնավորապես՝ ՀՀ վարչական դատարան հայցադիմում կազմելու և ներկայացնելու և դատաքննությանը մասնակցելու համար:

Նման պայմաններում դատարանը՝ հետազոտելով վարչական գործում առկա փաստարկները, գտնում է, որ հայցն ենթակա է բավարարման մասնակիորեն և տվյալ դեպքում անհրաժեշտ է կայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ոչ իրավաչափ անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի վերաբերյալ մասնակի՝ 50.000 ՀՀ դրամի չափով բավարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու մասին դատական ակտ, միաժամանակ վերացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 վարչական ակտն ամբողջությամբ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ «Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից»:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:



Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով քննարկելով դատական ծախսերի բաշխման հարցը, դատարանը՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 14.06.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է, իսկ հայցը բավարարվում է մասնակի, գտնում է, որ Հայցվորից և Պատասխանողից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պետք է բռնագանձել 2000-ական ՀՀ դրամ՝ որպես հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 123-127-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ն Ո Ւ Ց

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը բավարարել մասնակի:

Անվավեր ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Գևորգ Հայրապետյանի 03.02.2016 թվականի դիմումը մերժելու մասին Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 23.02.2016 թվականի թիվ 17-9-2939 վարչական ակտը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը պարտավորեցնել ընդունելու վարչական ակտ՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հանդեպ ոչ իրավաչափ անգործության հետևանքով պատճառված վնասի՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, հատուցման մասին:

Հայցը մնացած մասով մերժել:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 2000-ական (երկու հազարական) ՀՀ դրամ, որպես հետաձգված պետական տուրքի գումար:

3. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, դա կկատարվի հարկադրաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ



Ս. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ